ւածատէրերի համար նւազագոյն տոկոսով դրամ գտնել եւ Ռուսական ազնւականութեան բանկերի հարստահարութիւնից ազատել։ 1882—1907 թ. Եւրոպացիները սկսել էին պեղել Բաթումի, Արդվինի շրջակայքի հանքերը եւ առատ փող էին ցրւել այդ նահանգում։ Ինձ դիմեցին մի քանի հանքի տէր ճաներ, որ ես Եւրոպայում նրանց հանքերը շահագործողներ գտնեմ եւ հրաւիրեցին հանքերն այցելելու։ Ես գնացի Մուլխուր, տեսայ ծխախոտի տնկարանները, պղնձի հանքերը. ապա բարձրացայ Արդվին, Ծրիա, Խալխալ նաւակով եւ ուսումնասիրեցի ինչպէս ձիթենու պարտէզները, նոյնպէս Խոդի հանքերը։ Ինձ առաջնորդում էին պալխարեցի կալւածատէր ճաները, որոնց պապերը դարերով շահագործել էին իրենց պղնձի, արծաթի, ոսկու եւ երկաթի հանքերը։ Խալխալի եւ Պալխարի շուրջը 40 հանքատէրեր կան, որոնք տքնում էին ինձ համոզել իրենց հանքերի գերազանցութեան մասին, որպէս զի ես շահագործողներ-կապիտալիստներ գտնեմ եւ հանքերը մշակելու ձեռնարկեմ։ Աւելի քան 50—60 հաւատարմագիր տւին ինձ, լիազօրեցին որպէս զի ես անարգել Եւրոպայում բանակցեմ եւ շահագործողներին հրապուրեմ եւ գործի սկսեմ։ Խալխալից ես հասայ մինչեւ Պալխար, Բահլ եւ Բալհի, գննեցի ինչպէս հանքերը, նոյնպէս եւ հնութիւնները, բեր-